

Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան

«13.06.2024թ.»



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ձավեն Գագիկի Սմբատյանի՝ «Վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրները. վարչաիրավական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ձավեն Գագիկի Սմբատյանի (այսուհետ՝ Հեղինակ) «Վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրները. վարչաիրավական հետազոտություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստում (12.06.2024, արձանագրություն N 2), մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Թ. Շաքարյանի, ի.գ.դ., պրոֆեսորներ Գ.Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Հակոբյանի, ի.գ.թ. դոցենտներ Ա.Եզեկյանի, Հ.Ենգոյանի և Լ.Հակոբյանի, ի.գ.թ. Մ.Մկրտչյանի նիստի քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի:

Ատենախոսությունը նվիրված է վարչական ակտի սահմանման իրավական բնույթին, դրա հիմնախնդիրներին միջազգային-իրավական կարգավորումների համատեքստում և ներպետական իրավական համակարգում, ինչպես նաև վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրներին: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն հետազոտության համար ընտրված հարցերի հրատապությամբ, դրանց գիտական նշանակությամբ, այլև իրավակիրառ գործընթացի բարելավման չափանիշներով:

Թեմայի արդիականությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ աշխատանքում ներկայացված հարցադրումները, վերհանված մի շարք հիմնախնդիրները, հընթացս դրանց առնչությամբ բարձրացված հիմնախնդիրների կապակցությամբ հեղինակի առաջարկած որոշ իրավական լուծումները որոշակի գործնական արժեք են ներկայացնում մասնավորապես 2015 թ. սահմանադրական բարեփոխումների համատեքստում ամրագրված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի իրացման երաշխավորման տեսանկյունից, ու թեև իրավական այս ինստիտուտը գիտական և գործնական հարուստ փորձ ունի Արևմտյան Եվրոպայի երկրներում (հատկապես Գերմանիայում), հետխորհրդային երկրների իրավական համակարգերում այն դեռևս ուսումնասիրության և դրան համահունչ իրավական լուծումների ձևակերպման անհրաժեշտություն ունի:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են 9 պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ատենախոսության տեսական և նորմատիվ հիմքերը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթներ:

Աշխատանքի առաջին գլխում Հեղինակը ներկայացրել է բավականին ընդհանուր գծերով որոշ պատմաիրավական վերլուծություն վարչական ակտի հասկացության ձևավորման համատեքստում, ինչպես նաև վարչական ակտի հասկացության տեսական և օրենսդրական բնորոշումները, դրա հատկանիշները, այդ թվում՝ միջազգային-իրավական կարգավորումների համատեքստում: Աշխատանքի այս հատվածում՝ Հեղինակը վերլուծել է նաև վարչական ակտի գործառույթները՝ բացահայտելով դրանց բովանդակությունը:

Աշխատանքի երկրորդ գլխում Հեղինակը ներկայացրել է վարչական ակտի արդյունավետության գնահատման տարրերը՝ իրավաչափության գնահատումը, ակտի գործողության ազդեցության և հետևանքների գնահատումը, վարչական ակտի իրավաբանական ուժի կորստի (կամ դադարի) գնահատումը:

Աշխատանքի այս հատվածում Հեղինակն անդրադարձել է վարչական ակտի իրազեկման ինստիտուտին, վարչական ակտի հիմնավորվածությանը, լաված լինելու իրավունքին, ինչպես նաև բողոքարկման ինստիտուտին: Վարչական ակտի գործողության ազդեցության և հետևանքների գնահատման համատեքստում Հեղինակը ներկայացրել է նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, ինչպես նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կառուցակարգերի վերաբերյալ սեփական դատողությունները:

Աշխատանքի երրորդ գլխում Հեղինակն անդրադառնալով վարչական ակտի ներպետական կարգավորումներին՝ ներկայացրել է օրենսդրական բացերն ու դրանք լրացնելու օրենսդրական առաջարկություններ, ինչպես նաև վարչական ակտի օրինականության ապահովման երաշխիքները:

Աշխատանքի այս հատվածում Հեղինակը ներկայացրել է նաև բողոքարկվող վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը՝ իրավահամեմատական վերլուծությամբ և ներկայացրել դրա բարելավման վերաբերյալ ուրույն եզրահանգումներ:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները՝ եզրահանգումների տեսքով:

Աշխատանքը, հիմնականում, շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ մտքերից, քերականական կանոնների շեղումներից, սակայն առկա են լեզվական կանոնների որոշ շեղումներ, վրիպակներ և խրթին ձևակերպումներ (օրինակ՝ անհարկի կիրառված է «հայեցակարգ» եզրույթը, որը որևէ աղերս չունի համապատասխան համատեքստերում որպես այդպիսին համարվելու, էջեր 27, 32-33, 40, 113 և այլն):

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈՂ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, դատական ակտերը, ինչպես նաև արտասահմանյան երկրների փորձը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումներին, սակայն միջազգային փաստաթղթերի մասով կանդրադառնանք հաջորդիվ: Ավելին, ակնհայտ է, որ հեղինակը քաջ ծանոթ է հայրենական վարչադատավարական պրակտիկային, որը թույլ է տվել վերջինիս աշխատանքը հարստացնել գործնական օրինակներով:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ, որոշակի առումով դրսևորել է նաև իրավակիրառ պրակտիկական բարելավելուն, օրենսդրական ակտերում որոշակի փոփոխություններ կատարելուն ուղղված առաջարկություններ մշակելու անհրաժեշտ ունակություններ:

Միաժամանակ, կարծում ենք, ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1.1 Ատենախոսության թեմայի արդիականությունը հնարավոր էր առավել հիմնավոր ներկայացնել, քանի որ **ներածությունում բացակայում է թեմայի արդիականությունը հիմնավորող բավարար փաստարկները:** Հեղինակը պետք է

ներկայացնել վարչական ակտի արդյունավետության գնահատման գիտագործնական անհրաժեշտությունը, դրան համապատասխան հիմնավորումներով, հընթացս առաջ քաշելով անհրաժեշտ հարցադրումներ և ընդգծելով դրանց առնչությամբ գիտական հետազոտական աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը: Մինչդեռ թեմայի արդիականությունը սահմանափակվել է միայն նրանով, որ վարչական ակտերի արդյունավետության գնահատման հետազոտությունը պատկերացումներ է տալիս հանրային իշխանության գործունեության բարելավման վերաբերյալ, իսկ թե այն ինչ գիտական արժեք ունի Հեղինակի կողմից չի բացահայտվել:

1.2 Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, դատական ակտերը, ինչպես նաև արտասահմանյան երկրների փորձը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումներին: Ատենախոսությունում բավարար չափով ներկայացված է նաև միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակներում իրավահամեմատական վերլուծություններ ինչն առավելապես հարստացրել է կատարված հետազոտությունը: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ Հեղինակը չի օգտագործել խնդրո առարկա հարցադրումների հետազոտության համատեքստում այնպիսի միջազգային կարևոր փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 15.12.2004 թ. «Վարչական ակտերի դատական վերանայման մասին» թիվ (2004)20 հանձնարարականը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն՝ 28.09.1977 թ. «Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության վերաբերյալ» թիվ 77 (31) բանաձևը: Նշված փաստաթղթերի հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է Հեղինակի կողմից որպես պաշտպանության դրույթ ներկայացված վարչական ակտի սահմանմամբ, ինչպես նաև վարչական ակտերի բողոքի քննության սահմանների և բողոքը քննող մարմինների առնչությամբ ներկայացված դատողություններով:

1.3 Ատենախոսության գիտական նորույթը գիտագործնական արժեք ներկայացնող հիմնախնդրի ներկայացումը և վերլուծումն է՝ ընդգծելով դրա

ճանաչողական, գործնական և տեսական նշանակությունը՝ ամփոփելով այն կոնկրետ եզրահանգմամբ: Ատենախոսությունում առաջադրված եզրահանգումները ունեն ընդգծված գործնական ուղղվածություն, դրանք նաև ուղեկցվել են տեսական հիմնավորումներով և ունեն որոշակի տեսական արժեք, սակայն աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե դրանում ներկայացված եզրահանգումները առավելապես միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը, այլ կերպ ասած՝ առավել հստակ ընդգծվեր այդ առաջարկությունների բուն գիտական արժեքը, դրա կիրառման առնչությամբ ներկայացվեին առավել համակարգային տեսական դիրքորոշումներ, ինչը խնդրի լուծումը նկատելիորեն կդարձներ ամբողջական:

Ուստի նշվածի համատեքստում, թերևս, հիմնավորված չէ Հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացնելը ատենախոսության 6-7-րդ էջերում արտացոլված հետազոտության, ըստ Հեղինակի նշանակալից, արդյունքները: Մասնավորապես, գիտական նորույթ չի կարող լինել, օրինակ՝ վարչական ակտի գործողության կասեցման ինստիտուտի շուրջ առավել կանոնակարգող մեխանիզմների սահմանումը, վարչական բողոքի քննության փուլում անկախ բողոքի բովանդակությունից, վարչական մարմնի գործն ի պաշտոնե ամբողջ ծավալով քննելու մեխանիզմների սահմանում, վարչական ակտի օրենքի ուժով իրավաբանական ուժի կորստի սպառիչ հիմքերի շարադրում և այդ հիմքերը կանոնակարգող մեխանիզմների սահմանում, իրավաչափ վարչական ակտով պատճառված վնասի ինստիտուտի պարզաբանում և ոլորտը կանոնակարգող մեխանիզմների սահմանում և այլն:

Այսպիսով, հարկ է նկատել, որ թեև աշխատանքը պարունակում է գիտական նորույթ, այնուհանդերձ, Հեղինակը, խոցելի ձևակերպումներով, չի կարողացել բացահայտել այն գիտական նորույթին վերաբերող հատվածում:

1.4. Ատենախոսությունում առաջադրված եզրահանգումները, ինչ խոսք, ունեն գործնական ուղղվածություն, դրանք նաև ուղեկցվել են տեսական հիմնավորումներով, սակայն աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե այդ պաշտպանության դրույթներում արտացոլված եզրահանգումները ոչ միայն անմիջականորեն վերաբերեին օրենսդրական փոփոխություններին, այլև որոշակի

ընդհանրացումների արդյունքում միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը, այլ կերպ ասած՝ ընդգծվեր այդ առաջարկությունների բուն գիտական արժեքը, դրա կիրառման առնչությամբ ներկայացվեին առավել համակարգային տեսական դիրքորոշումներ ինչը խնդրի լուծումը նկատելիորեն կդարձներ ամբողջական, և նոր դրա հիման վրա ներկայացվեին օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ: Այս համատեքստում, օրենքի նախագիծը, որը ներկայացված է որպես պաշտպանության դրույթ (տես՝ պաշտպանության 6-րդ դրույթը), կարծում ենք, չի կարող որպես այդպիսին դիտարկվել: Ավելին, այս նախագծով ներկայացված փոփոխությունները որպես եզրահանգումներ Հեղինակը ներկայացրել է նաև եզրակացության հատվածում:

Պաշտպանության որոշ դրույթներն էլ լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն այն համատեքստում, որ պետք է բացահայտված լինեին դրանց գիտական արժեքը, որոշակի ընդհանրացումների արդյունքում միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը: Այսպես, պաշտպանության 3-րդ դրույթի առնչությամբ նշենք, որ առնվազն հիմնավորված չէ, որպես պաշտպանության դրույթ ներկայացնել այն օբյեկտիվ իրողությունը, որ **ըստ որի՝ վարչական ակտն իրավաչափ է, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել ոչ իրավաչափ կամ անվավեր:**

1.5. Աշխատանքի երկրորդ գլուխը անհարկի ծանրաբեռված է ընտրված թեմայի հետ առնչվող, սակայն դրանցից յուրաքանչյուրն առանձին հետազոտության առարկա հանդիսացող ինստիտուտների ներկայացմամբ և դրանց առնչությամբ դատողություններով, որոնք թերևս առավելապես հիմնավորված կլինեին խորքային և համակարգային ուսումնասիրությունների արդյունքում, օրինակ՝ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը, պատշաճ ծանուցման ինստիտուտը և այլն:

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

2.1 Ատենախոսությամբ ներկայացված պաշտպանության 4-րդ դրույթի վերաբերյալ Հեղինակը աշխատանքում ներկայացնում է իրարից տարբերվող դիրքորոշումներ:

Այսպես, ըստ Հեղինակի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական իրավունքին մինչ այժմ հայտնի են վարչական մարմիններ, որոնք չունեն վերադաս վարչական մարմին, չնայած նրա, որ նույն իրավունքի ճյուղում առկա է վարչական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու ինստիտուտ, ինչը հակասում է իրավական տրամաբանության և իրավական որոշակիությանը՝ ատենախոսությամբ հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ *յուրաքանչյուր դեպքում, երբ վարչական մարմին հասկացության ներքո ներառվող սուբյեկտը չունի վերադաս վարչական մարմին, ապա վերադասության կարգով վարչական բողոք պետք է քննվի այդ մարմնի կողմից ստեղծված կամ լիազորված հատուկ սուբյեկտի կամ հանձնաժողովի կողմից, որի ստեղծումը որևէ կերպ չի կարող հակասել վերջիններիս անկախության երաշխիքներին, եթե այդպիսիք առկա են:*

Առնվազն անհասկանալի են Հեղինակի հիմնավորումները այն համատեքստում, որ եթե վարչական մարմինը չունի վերադաս, ապա բողոքարկման ինստիտուտը հակասում է իրավական տրամաբանության և իրավական որոշակիությանը:

Միևնույն ժամանակ աշխատանքի 3-րդ գլխի 2-րդ պարագրաֆում, հեղինակը նշում է, որ խնդրահարույց կարող է լինել նաև այն վարչական մարմինների վերադաս մարմիններին որոշելը, որոնց լիազորությունները և գործունեության ոլորտը կանոնակարգող իրավակարգավորումները հստակ չեն: Օրինակ՝ Երևանի քաղաքապետն ունի հասարակական կարգի պահպանության բնագավառում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված արարք հայտնաբերելիս զանցառուներին վարչական պատասխանատվության ենթարկել լիազորություն: Այդ լիազորությունը վերջինիս բացառիկ լիազորություն է որպես համայնքի ղեկավար: Սակայն համայնքի ղեկավարն այդ լիազորությունների շրջանակներում վերալիազորել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ իր փոխարեն վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը քննելու համապատասխան վարչական ակտ ընդունելու համար: Նման իրավիճակում օբյեկտիվորեն հարց է առաջանում նման սուբյեկտը՝ ում վերապահվել են գործերը, քննելու լիազորությունը, վարչական ակտը կայացնում է իր անունից, թե

այնուամենայնիվ ակտը ընդունող է հանդիսանում Երևանի քաղաքապետը որպես լիազորող: ...Ասվածի լույսի ներքո՝ վերադասության կարգով վարչական բողոք ներկայացնելու և վարչական ակտն ընդունած վարչական մարմնին բողոք ներկայացնելու իմաստիտուտն՝ տարանջատումն առարկայազուրկ է դառնում:

Նմանօրինակ իրավիճակում խնդրի լուծում կարող է դրևորվել հատուկ վարչական բողոքների քննարկման մարմնի ստեղծմամբ, որն ի պաշտոնե կհանդիսանա վարչական մարմնի կողմից կայացրած վարչական ակտը վերաքննության կարգով քննող օղակ և կաշկանդված չի լինի վարչական ակտն իր կողմից կայացված լինելու փաստական հանգամանքով: Տեսականորեն այդ մարմինը կարող է կոչվել «Վարչական ակտերի վերաքննության հանձնաժողով», որը որպես նոր հայեցակարգ, նոր խոսք է իրավունքի զարգացման ուղղությամբ:

Իսկ որպես հավելված ներկայացված օրենքի նախագծի 8-րդ հոդվածում առաջարկում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«5. Այն պարագայում, երբ վարչական ակտը կայացրած վարչական մարմինը չունի վերադաս վարչական մարմին, ապա վերադասության կարգով վարչական բողոք կարող է ներկայացվել վարչական ակտերի վերաքննության հանձնաժողովին, որի կազմակերպման և գործունեության կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը»:

Այսպիսով, եթե վարչական մարմինը չունի վերադաս, ապա մի դեպքում Հեղինակը, ներկայացնում է՝

1. որպես պաշտպանության դրույթ՝ վերադասության կարգով վարչական բողոք պետք է քննվի այդ մարմնի կողմից ստեղծված կամ լիազորված հատուկ սուբյեկտի կամ հանձնաժողովի կողմից, որի ստեղծումը որևէ կերպ չի կարող հակասել վերջիններիս անկախության երաշխիքներին:

Հարկ է ընդգծել, որ Հեղինակի կողմից առաջառված խնդիրը կաշկանդված չլինել վարչական ակտն իր կողմից կայացված լինելու փաստական հանգամանքով, տվյալ առաջարկությամբ չի լուծվելու, քանի որ այդ մարմինը ստեղծելու է ակտը կայացրած վարչական մարմինը: Երկրորդ՝ ինչպես պետք է ապահովել անկախությունը նոր ստեղծվող մարմնի, թերևս Հեղինակը չի բացահայտում:

Հետևաբար, վարչական ակտերի վարչական վերանայումը վերադաս չունեցող մարմնի կողմից դեռևս համարվում է հիմնավորված լուծում:

2. որպես եզրահանգում՝ խնդրի լուծում կարող է դրևորվել հատուկ վարչական բողոքների քննարկման մարմնի ստեղծմամբ, այդ մարմինը կարող է կոչվել «Վարչական ակտերի վերաքննության հանձնաժողով»,

Այս հատվածում Հեղինակը չի բացահայտում, ինչպես է ստեղծվելու այդ հանձնաժողովը, և արդյոք Հանձնաժողովին նման իրավասության վերապահումը չի խաթարելու հենց այդ վարչական մարմինների անկախության երաշխիքները: Ավելին, նշվածն առավել խոցելի է դարձնում Հեղինակի հաջորդիվ առաջարկն այդ իրավասությունը վերապահել Կառավարությանը:

3. որպես եզրահանգման օրենսդրական ձևակերպում՝ այն պարագայում, երբ վարչական ակտը կայացրած վարչական մարմինը չունի վերադաս վարչական մարմին, ապա վերադասության կարգով վարչական բողոք կարող է ներկայացվել վարչական ակտերի վերաքննության հանձնաժողովին, որի կազմակերպման և գործունեության կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ինչպես տեսնում ենք, Հեղինակի պաշտպանության դրույթն ու եզրահանգումը հակասում են այն համատեքստում, որ մի դեպքում առաջարկում է հատուկ մարմինը ստեղծել այն վարչական մարմնի կողմից, որը չունի վերադաս մեկ այլ դեպքում ստեղծել Վարչական ակտերի վերաքննության հանձնաժողով, բոլոր այն վարչական մարմինների համար, որոնք չունեն վերադաս, իսկ օրենսդրական առաջարկությամբ վերջին միտքը զարգացնում է այդ կազմակերպման և գործունեության կարգի սահմանման իրավասությունը վերապահելով Կառավարությանը: Միևնույն ժամանակ առաջարկներից յուրաքանչյուրը ինքին առավել խորքային հիմնավորման անհրաժեշտություն ունի:

2.2 Ատենախոսության կառուցվածքը և ընտրված հարցադրումների ցանկը, իրավական ընկալունակության տեսանկյունից ընդունելի է, սակայն թեմային առնչվող հարցադրումներին հնարավորինս համալիր անդրադառնալու խնդրի համակողմանի լուծման համատեքստում, կարծում ենք, Հեղինակը կարող էր նյութը հարստացնել վարչական լուծության արդյունք հանդիսացող ֆիկտիվ վարչական

ակտի վերաբերյալ վերլուծություններով՝ հընթացս առաջ քաշելով անհրաժեշտ եզրահանգումներ և դատողություններ՝ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի, դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի դիրքորոշումների, ինչպես միջազգային փորձի ու տեսական գրականության ուսումնասիրության համատեքստում:

Նշվածը պայմանավորված է նրանով, որ հետխորհրդային պետություններում վարչական լռության ինստիտուտի հիմնախնդիրների ընկալման վերաբերյալ համարժեք գիտական ուսումնասիրությունների բացակայության պայմաններում իրավակիրառ պրակտիկայում գործնականում անհնարին է դառնում հաղթահարել վարչական մարմինների ողջամիտ ժամկետում գործելու սկզբունքի խախտման արդյունքում ծագող խնդրահարույց իրավիճակները: Այս տեսանկյունից հայրենական օրենսդրությամբ «վարչական լռության» ինստիտուտի վերաբերյալ իրավակարգավորումները գործնականում համապատասխան կիրառում չեն ունենում, հետևաբար, ֆիկտիվ վարչական ակտերի և դրանց բողոքարկման գիտագործնական ուսումնասիրությունը պատշաճ վարչարարության իրավունքի միջազգային պահանջներին ներդաշնակ դարձնելու անհրաժեշտությունից ելնելով առավել քան արդիական է:

2.3 Ողջունելի է, որ Հեղինակը անդրադարձ է կատարել լավելու իրավունքի իրացմանը, սակայն աշխատանքն առավել կշահեր, եթե Հեղինակը առավել համակողմանի անդրադարձ կատարեր լավելու իրավունքի իրացման օրենսդրական կարգավորումներում առկա բացերին: Մասնավորապես, լավելու իրավունքի իրացման հիմնախնդիրն առավելապես առկա է վարչական առանձին տեսակի վարույթների կարգավորումներում: Մասնավորապես, նշված խնդիրը առավել քան ակնհայտ է տեսանկարահանող սարքերով ամրագրված և ավտոտրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղիում կայանելու համար տեղական վճարը չվճարելու իրավախախտումների վերաբերյալ վարույթներով կայացված միջամտող վարչական ակտերի դեպքում՝ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» և «Ավտոտրանսպորտային

միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքներով լսումներ չանցկացնելու բացառություն սահմանված չինելու համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ **Ջավեն Գագիկի Սմբատյանի «Վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրները. վարչաիրավական հետազոտություն»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, վերոհիշյալ նկատառումները նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է **ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ պետական կառավարման իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Թ.Ա.Շաքարյան

Նիստի քարտուղար՝

Ա. Հովհաննիսյան



Ամբիոնի վարիչ Թ. Շաքարյանի ստորագրությունը հաստատում են՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ս. Ա. Պողոսյան